



**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ
ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**



**ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄԸ
ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ**

ԵՐԵՎԱՆ – 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄՆ՝ ԸՍՏ «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ.....	3
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ.....	7
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ.....	11
ՇԱՀԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ.....	14
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ	15
ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	16

Շահերի բախումն իրավիճակ է, երբ **բարձրաստիճան պաշտոնատար անձն** (այսուհետ նաև՝ ԲՊԱ-Տե՛ս Պատկեր 1.) իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես **իբ կամ իբ հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել**:

Պատկեր 1. Բարձրաստիճան պաշտոնատար անձինք



ՀՀ Նախագահի եւ Նախագահի աշխատակազմ

Հանրապետության Նախագահը, Նախագահի աշխատակազմի ղեկավարը եւ տեղակալները, Նախագահի վերահսկողական ծառայության ղեկավարը, Ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը, Նախագահի խորհրդականները, մամուլի քարտուղարը եւ օգնականները, Գլխավոր ռազմական տեսուչը եւ տեղակալները, հատուկ հանձնարարություններով դեսպանը:



Կառավարություն

Վարչապետը, վարչապետի խորհրդականները եւ օգնականները, վարչապետի վերահսկողական ծառայության ղեկավարը, Նախարարները եւ տեղակալները, ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարը եւ տեղակալները, Կառավարության առընթեր պետական կառավարման մարմինների ղեկավարները, տեղակալները, ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը եւ տեղակալները, ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը եւ տեղակալները:



Դեսպաններ

Օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարները, հատուկ հանձնարարություններով դեսպանը:



Օրենսդիր մարմին

Ազգային ժողովի պատգամավորները, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարը եւ տեղակալները, Ազգային ժողովի Նախագահի խորհրդականները եւ օգնականները:



Սահմանադրական դատարան

Սահմանադրական դատարանի անդամներ, Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարը:



Դատավորներ

Դատախազություն եւ քննչական մարմիններ

ՀՀ գլխավոր դատախազը եւ նրա տեղակալները, մարզերի, Երեւան քաղաքի եւ կայազորների դատախազները, ՀՀ քննչական կոմիտեի Նախագահը եւ նրա տեղակալները, ՀՀ հատուկ քննչական ծառայության պետը եւ նրա տեղակալները:



Ծառայություններ

ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության պետական պահպանության ծառայության պետը եւ նրա տեղակալները, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետը եւ նրա տեղակալները, ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության ղեկավարը եւ նրա տեղակալները, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը եւ նրա տեղակալները, ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի կատարման ծառայության գլխավոր հարկադիր կատարողը եւ նրա տեղակալները, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության տնօրենը եւ տեղակալները:



ՄԻՊ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ղեպարտամենտների ղեկավարները:



Մարզեր, համայնքներ

Երեւանի քաղաքապետը եւ տեղակալները, մարզպետները եւ տեղակալները, Նախորդ տարվա հունվարի 1-ի դրությամբ 50000 եւ ավելի բնակիչ ունեցող համայնքների ղեկավարները:



Այլ պետական մարմիններ

Օրենքներով ստեղծված պետական մարմինների (հանձնաժողովներ, խորհուրդներ) ղեկավարները, տեղակալները եւ այլ հանձնաժողովների, խորհուրդների անդամները, Վերահսկիչ պալատի Նախագահը, տեղակալը, խորհրդի անդամները, Կենտրոնական բանկի Նախագահը, տեղակալը, կենտրոնական բանկի խորհրդի անդամները:



«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝

«1. Բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝

1) իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

2) իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.


3) իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.

4) իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:

3. Ըստ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթների՝ բարձրաստիճան պաշտոնատար անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:»:

Այսպիսով, շահերի բախման սահմանումը խիստ նեղ է: Վկայակոչված դրույթների համաձայն՝ շահերի բախման կարգավորումները տարածվում են **բացառապես բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա**: Դրանք առնչվում են ԲՊԱ-ի կողմից **անձամբ** (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում) որևէ գործողության կատարմանը կամ որոշման ընդունմանը: Շահերի բախման իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ **փոխկապակցված անձանց շրջանակը սահմանափակ է**: Այդպիսիք են համարվում բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Վերոնշյալ օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք՝ զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք (Տե՛ս Պատկեր 2.):

Պատկեր 2. Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք



Օրենսդրական թերի կարգավորումներն առաջ են բերում նաև գործնական խնդիրներ: Մասնավորապես, գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հնարավորություն չի ունեցել իրավական ընթացակարգերի շրջանակում արձագանքելու 01.01.2016-01.05.2018թթ. ընթացքում իր կողմից քննության առնված շահերի բախմանն առնչվող 7 իրավիճակների.

- 3-ը Հանձնաժողովի իրավասությունից դուրս են եղել սուբյեկտային կազմի հիմքով: Այդ առնչությամբ, արարքները վերագրվել են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող անձանց

(նախարարության աշխատակազմի ղեկավար, գնումների բողոքարկման խորհրդի անդամ, մարզպետի օգնական):

- 4 դեպքում ԲՊԱ փոխկապակցված անձանց շրջանակը դուրս է եղել «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխան՝ **բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց շրջանակից (հորեղբոր զավակ, զավակի ամուսնու քույր, զավակի ամուսնու հայր, ազգակցական կապի մեջ չգտնվող անձ):**

Միաժամանակ, ամբողջական չեն շահերի բախման իրավիճակների կառավարման օրենսդրական կառուցակարգերը: Մասնավորապես, ներդրված չէ շահերի հայտարարագրման համակարգը: Օրենսդրորեն կանոնակարգված չէ լիազորություններն իրականացնելիս մասնավոր շահեր առաջանալու դեպքում վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող պաշտոնատար անձի գործողությունը: Սահմանված չէ պատասխանատվություն շահերի բախման իրավիճակում որոշում ընդունելու կամ գործողություն կատարելու համար: Պատգամավորների, դատավորների և դատախազների շահերի բախման կանոնները սահմանված են տվյալ ոլորտի առանձնահատկությունները կարգավորող օրենքներով: Վերջիններիս կողմից շահերի բախման հարցերը քննարկելու իրավասություն Հանձնաժողովը չունի:

Շահերի բախմանն առնչվող օրենսդրական կարգավորումների վերանայման համատեքստում Հանձնաժողովի կողմից մշակվել են շահերի բախման ինստիտուտի բարելավման օրենսդրական առաջարկություններ, որոնց մի մասը թեև իրացված է «Հանրային ծառայության մասին» ՀՀ նոր օրենքում (<http://ethics.am/hy/news/item/2018/03/30/news89/>), այդուհանդերձ, օրենսդրական որոշ լուծումներ գործնականում անհնարին են դարձնում շահերի բախման կանխումը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԼՊԱՏԱԿՆ ՈՒ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ

Հանձնաժողովը շահերի բախման դեպքեր վերահանելու և դրանք կանխարգելելու նպատակով 2017 թվականի հոկտեմբեր - 2018 թվականի մարտ ամիսներին իրականացրել է ուսումնասիրություն, որի նպատակն էր բացահայտել այն դեպքերը, երբ շահերի բախման իրավիճակում բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ 1-ին աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձանց (ծնող, զավակ, քույր, եղբայր), ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու մասնակցությամբ կազմակերպությունները ճանաչվել են գնումների մրցույթների հաղթող մասնակիցներ:

Ընդ որում, ուսումնասիրության շրջանակում «շահերի բախման իրավիճակ» ձևակերպման ներքո նկատի չի ունեցվել **միայն գործող օրենսդրական սահմանումը**: Հարցին անդրադարձ է կատարվել ավելի լայն դիտանկյունից՝ նկատի ունենալով վերաբերելի միջազգային ստանդարտները, որոնց համապատասխան՝ շահերի բախումն իրավիճակ է, երբ պաշտոնատար անձն ունի իր, իրեն փոխկապակցված անձի հետ կապված մասնավոր շահ (ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն), որն առերևույթ կամ փաստացի ազդում է կամ ողջամտորեն կարող է ազդել իր պաշտոնական լիազորությունների պատշաճ իրականացման վրա: Ուշադրություն է դարձվել նաև գնումների գործընթացում շահերի բախման ռիսկեր բովանդակող գործոնների վերլուծությանը և գնահատմանը:

Բացառապես գործող օրենսդրական կարգավորումներով առաջնորդվելու պարագայում, սույն ուսումնասիրության շրջանակում ուշադրությունից կարող էին դուրս մնալ այն իրավիճակները, որոնք շահերի բախում չեն ենթադրում՝ օրենքին համապատասխան, սակայն այդպիսին են՝ ըստ էության: Օրինակ՝ բազմաթիվ են դեպքերը, երբ ԲՊԱ-ն թեև ֆորմալ առումով որևէ ներգրավվածություն չի ունենում գնման մրցույթի կազմակերպման, հաղթող մասնակցի որոշման և վերջինիս հետ պայմանագրի կնքման գործընթացներին, այդուհանդերձ, վերջինս որպես պատվիրատու մարմնի պաշտոնատար անձ կարող է փաստացի ազդեցություն ունենալ այդ մարմնում իր շահերից բխող որոշումների կայացմանը՝ անկախ գնումների գործընթացին իր ներգրավվածությունից:

Դրա հետ մեկտեղ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ շահերի բախման օրենսդրական կարգավորումները ներկայումս տարածվում են բացառապես ԲՊԱ-ների վրա, ուսումնասիրության թիրախային խմբում ընդգրկվել են ԲՊԱ-ները:

Ուսումնասիրվել են 489 ԲՊԱ-ների 2181 հայտարարագրեր, որոնցից 380-ը՝ պաշտոնը ստանձնելու հայտարարագրեր են, իսկ 1801-ը՝ տարեկան հայտարարագրեր: Ուսումնասիրվել են նաև ԲՊԱ ամուսինների 283 հայտարարագրեր:

ԲՊԱ-ներից.

- 196-ը՝ ներկայացնում են գործադիր իշխանությունը.
- 115-ը՝ օրենսդիր իշխանությունը.
- 90-ը՝ դատական իշխանությունը և դատախազությունը.
- 88-ը՝ օրենքով ստեղծված մարմինները:

Թեև Հանձնաժողովի գործառույթներն ամբողջ ծավալով տարածվում են վերոնշյալ 4 խմբերից միայն գործադիր իշխանության պաշտոնյաների նկատմամբ, այնուամենայնիվ, մյուս

խմբերի մասով ևս ուսումնասիրվել են տվյալներ՝ շահերի բախման ռիսկերի վերհանման նպատակով:

Ուսումնասիրությունն համատարած է, ոչ ընտրանքային, ինչով պայմանավորված դրա արդյունքների արժանահավատության մակարդակը բարձր է: Ի տարբերություն ընտրանքային ուսումնասիրությունների, երբ առկա է վիճակագրական սխալի որոշակի սպասելի հնարավորություն, տվյալ դեպքում ենթադրվում է սխալի՝ առավել ցածր, իսկ եզրահանգումների հավաստիության առավել բարձր մակարդակ:

Ուսումնասիրության շրջանակում անդրադարձ է կատարվել գլխավոր համախմբության (առևտրային կազմակերպություններ ներառող ցանկ) բոլոր միավորներին, ինչը նշանակում է, որ թույլատրելի ընտրանքային սխալի հավանականությունը բավական ցածր է:

Հնարավոր սխալները տեխնիկական բնույթի են (օրինակ՝ որոնողական համակարգերում կազմակերպության անվանման մեջ կարող է վրիպակ լինել), կամ՝ պայմանավորված են որոշ տվյալների հասանելիության բարդություններով (անձնական տվյալների և կազմակերպությունների անվանումների նույնականացման բարդություններ, թվայնացված տվյալների բացակայություն և այլն):

Գնումների մասնակիցների վերաբերյալ տվյալների հավաքագրումը

1. Ուսումնասիրության առաջին փուլում Հանձնաժողով ներկայացված՝ ԲՊԱ և նրանց ամուսինների հայտարարագրերի ռեեստրից դուրս են բերվել ԲՊԱ-ի, նրա հետ 1-ին աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող համատեղ ապրող անձանց (ծնող, զավակ, քույր, եղբայր), ինչպես նաև ԲՊԱ-ի ամուսնու՝ ուսումնասիրության խնդիրների տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող տվյալները:

2. Երկրորդ փուլում Քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության (այսուհետ՝ ՔԿԱԳ) ուղղված հարցմանն ի պատասխան ստացվել են տվյալներ (անուն-ազգանուն, հանրային ծառայությունների համարանիշ)՝ ԲՊԱ և վերջիններիս ամուսինների առաջին աստիճանի ազգականների վերաբերյալ (թվայնացված և հասանելի տվյալներ):

ՔԿԱԳ-ից՝ հայցվել են տվյալներ ԲՊԱ-ի

- ամուսինների,
- ծնողների,
- զավակների,
- քույրերի և եղբայրների մասին:

3. Հայտարարագրերից և ՔԿԱԳ-ից ստացված տվյալները համալրվել են բաց աղբյուրներում (օրինակ՝ ՀՀ ընտրողների ռեգիստրը, լրատվամիջոցների հրապարակումները) առկա տվյալներով:

4. Այնուհետև՝ ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային համակարգից (e-register) դուրս են բերվել ԲՊԱ,

¹ Քանի որ բոլոր տվյալները թվայնացված չեն, բազմաթիվ են դեպքերը, երբ ՔԿԱԳ կողմից ԲՊԱ և վերջիններիս ամուսինների փոխկապակցված անձանց մասին տրամադրված տվյալներն ամբողջական չեն: Փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկությունների բացակայությունը խոչընդոտել է նրանց մասնակցությամբ բոլոր առևտրային կազմակերպությունների դուրսբերմանը:

վերջիններիս ամուսինների, ինչպես նաև՝ ԲՊԱ-ի հետ 1-ին աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների տվյալները:

5. ԲՊԱ մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների վերաբերյալ հարցում է ուղարկվել Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա²:

Նշված քայլերի արդյունքում ձևավորվել է 841 առևտրային կազմակերպություններ ներառող ցանկ (այսուհետ՝ «Կազմակերպությունների բազա»):

Գնումների հաղթող մասնակիցների վերաբերյալ տվյալների ձեռքբերումը

Գնումների հաղթող մասնակիցների և նրանց հետ կնքված պայմանագրերի մասին տվյալները ստացվել են 3 հիմնական աղբյուրներից:

1. ՀՀ Ֆինանսների նախարարության www.armeps.am «Հաշվետվություններ և վերլուծություններ» հատվածում տեղակայված որոնողական համակարգում զետեղված են գնումների մասնակիցների հետ կնքված պայմանագրերը՝ սկսած 2016թ. հուլիսի 1-ից³:

Այս համակարգում որոնումն իրականացվել է ըստ մատակարարների (մրցույթի հաղթող մասնակիցների): Մասնավորապես, համապատասխան վանդակում հերթով մուտքագրվել են առևտրային կազմակերպությունների անվանումներ՝ «Կազմակերպությունների բազա»-յից: Հայտնաբերված համընկնումները գրանցվել են:

2. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալների առաջին աղբյուրում ներկայացված էին միայն 2016թ. հուլիսի 1-ից հետո կնքված պայմանագրերը՝ օգտագործվել է տվյալների ևս մեկ աղբյուր՝ ՀՀ Ֆինանսների նախարարության www.old.gnumner.am կայքի «Գնումների հայտարարություններ» հատվածի «Կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ» բաժինը:


Այստեղ զետեղված էին սկսած 2014թ. հունվարի 13-ից կնքված պայմանագրերի մասին հայտարարություններ:

Նշված կայքում առկա կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների քանակը՝ ըստ գնման ընթացակարգի տեսակների 13.01.2014-01.07.2016թթ. ժամանակահատվածի համար ներկայացված է Պատկեր 3.-ում:

² Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան բազմաթիվ դեպքերում չի կարողացել նույնականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց՝ թեև հանրային ծառայության համարանիշները Հանձնաժողովի կողմից ևս տրամադրվել են: Թերևս պատճառն այն է, որ բաժնեմասը գրանցելիս ներառվում են անձի անձնագրային տվյալները, ինչը ժամանակի ընթացքում փոփոխվում է:

³ Հազվադեպ հանդիպել են նաև ավելի վաղ (օրինակ՝ 2015թ.) կնքված պայմանագրեր:

Պատկեր 3. Կնքված պայմանագրերի մասին հայտարարությունների քանակը՝ ըստ գնման ընթացակարգի տեսակների.



Ուսումնասիրության խնդիրների տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող բոլոր 6023 հայտարարություններն ուսումնասիրվել են և դրանցից դուրս են բերվել այն հաղթող մասնակիցները, որոնք ներկայացված են «Կազմակերպությունների բազա»-յում:

3. ՀՀ էլեկտրոնային կառավարման համակարգի «Մեկ անձից կատարվող գնումներ» բաժնում (<https://www.e-gov.am/transparent/>) ներկայացված են «Մեկ անձից կատարվող գնումներ» ընթացակարգով տեղի ունեցած գնումների արդյունքները՝ ըստ տարեթվերի և ըստ պատվիրատու մարմինների:

Դիտարկվել, ուսումնասիրվել են միայն այն մրցույթները, որտեղ գնման առարկայի գինը գերազանցել է 500.000 ՀՀ դրամը:

Այսպիսով, տվյալների 3 աղբյուրներից (www.armeps.am, www.old.gnumner.am, <https://www.e-gov.am/transparent/>) դուրս են բերվել 13.01.2014-31.01.2018թթ. ժամանակահատվածում գնումների մրցույթներում հաղթող այն մասնակիցների վերաբերյալ տվյալները, որոնք ներկայացված են «Կազմակերպությունների բազա»-յում:

Միաժամանակ, գնման ընթացակարգերի շրջանակում կնքված մի շարք պայմանագրեր հասանելի չեն եղել: Այդ առնչությամբ, ի պատասխան իրավասու կառույցներին ուղղված հարցումներին.

- ֆինանսների նախարարությունը տեղեկացրել է, որ 2014թ.-ի հունվարի 1-ից 2016 թ.-ի հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում գնումների գործընթացին մասնակցության շրջանակում կնքված պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվություն չի հավաքագրել:

- Պետական գույքի կառավարման վարչությունը տեղեկացրել է, որ լուծարման հանձնաժողովը «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի փաստաթղթերը հանձնել է «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ին:

- «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ը տեղեկացրել է, որ համապատասխան փաստաթղթերն արխիվ չեն հանձնվել, ուստի չեն կարող տրամադրվել:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուսումնասիրության շրջանակներում բացահայտվել են ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ **91** առևտրային կազմակերպությունների տվյալներ, որոնք 13.01.2014 – 31.01.2018թթ. ժամանակահատվածում ճանաչվել են մրցույթի հաղթող, և նրանց հետ կնքվել է **709** պայմանագիր:

Ստորև ներկայացված են հաղթող մասնակիցների հետ կնքված պայմանագրերի թվաքանակն՝ ըստ գնման ընթացակարգի տեսակի:

Աղյուսակ 1. Կնքված պայմանագրերի քանակն՝ ըստ գնման ընթացակարգի

Գնման ընթացակարգի տեսակը	Կնքված պայմանագրերի քանակը	%-ն՝ ընդհանուրի (709) մեջ
Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության	469	66.1
Բաց մրցույթ	6	0.8
Շրջանակային համաձայնագիր	70	9.9
Մեկ անձից գնում	96	13.5
Պարզեցված ընթացակարգ	13	1.8
Գնանշման հարցում	13	1.8
Պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող փակ կնքված շրջանակային համաձայնագիր	2	0.3
Բաց ընթացակարգ	30	4.2
Հրատապ բաց մրցույթ	3	0.4
Բանակցային ընթացակարգ՝ հայտարարությամբ	7	1
Ընդհանուր	709	100%

Աղյուսակի տվյալներից հետևում է.

- Նշված պայմանագրերի մեծ մասը՝ **469**-ը կամ ընդհանուրի **66%**-ը կնքվել է «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգի շրջանակներում: Սա նշանակում է, որ այդ մրցույթների համար նախապես հայտարարություն չի հրապարակվել:

2. Տարածվածությամբ 2-րդը՝ մեկ անձից գնման ընթացակարգով կատարված գնումներն են (96 պայմանագիր (13.5%)), որոնք ևս ռիսկային են՝ գնման այլ ընթացակարգերի համեմատ: Ավելին, նմանատիպ գնումների փաստաթղթերը (օրինակ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերը, ընտրված մասնակցի հետ կնքված պայմանագիրը) հաճախ չեն հրապարակվել:
3. ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ 2014-2017թթ. կնքված պայմանագրերի ընդամենը 1.8%-ն է «Գնանշման հարցում» ընթացակարգով կնքվել:

ՀՀ ֆինանսների նախարարության www.armeps.am կայքի «Ամփոփ հաշվետվություններ» հատվածում (<https://www.armeps.am/ppcm/public/reports>) ներկայացված են վիճակագրական տվյալներ՝ տարբեր տարիներին կայացած գնումների վերաբերյալ:

Դիտարկվել են 2016 և 2017թթ⁴. կայացած գնումների թվաքանակի վերաբերյալ տվյալները՝ ըստ գնման ընթացակարգերի:

Աղյուսակ 2. 2016-2017թ. ընթացքում ամփոփված և կայացած չափաբաժինների/գնումների քանակը՝ ըստ գնման ընթացակարգերի

Գնման ընթացակարգի տեսակը	2016թ. ամփոփված և կայացած չափաբաժինների/գնումների քանակը	%-ն՝ ընդհանուրի մեջ	2017թ. ամփոփված և կայացած չափաբաժինների/գնումների քանակը	%-ն՝ ընդհանուրի մեջ
Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության	11303	16.3	8514	7.9
Բաց մրցույթ	1491	2.1	1210	1.1
Շրջանակային համաձայնագիր	15080	21.7	27638	25.8
Մեկ անձից գնում	8666	12.5	8036	7.5
Պարզեցված ընթացակարգ	681	1	474	0.4
Գնանշման հարցում	29684	42.8	59358	55.4
Պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող փակ կնքված շրջանակային համաձայնագիր	տվյալները բացակայում են	-	տվյալները բացակայում են	-

⁴ Ավելի վաղ ժամանակահատվածում ըստ ընթացակարգերի տեղի ունեցած գնումների մասին տվյալները բացակայում են:

Բաց ընթացակարգ	1327	1.9	1149	1.1
Հրատապ բաց մրցույթ	610	0.9	263	0.2
Բանակցային ընթացակարգ՝ հայտարարությամբ	365	0.5	274	0.3
Հրատապ մեկ անձ	189	0.3	189	0.2
Ընդհանուր	69.396		107.105	

Աղյուսակ 2-ի տվյալներից հետևում է, որ 2016թ. ամփոփված և կայացած չափաբաժինների/գնումների ամբողջ ծավալի մոտ **16.3%-ն** է բաժին ընկնում «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգին: 2017թ. համապատասխան ցուցանիշը կազմում է ընդամենը **7.9%**:

Նորմալ բաշխման (այսինքն՝ բաշխված են համամասնորեն) պարագայում կարելի է ակնկալել, որ, օրինակ, 2016թ. հաղթող մասնակիցների մոտ 16%-ն է հաղթել «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգով, իսկ 2017թ.-ին՝ մոտ 8%-ը:

Մինչդեռ, ուսումնասիրության տվյալները վկայում են, որ ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ 2014-2017թթ. կնքված պայմանագրերի գերակշիռ մասը (**66%**) կնքվել է հենց «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգով:

Այսինքն՝ ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ մի քանի անգամ ավելի հաճախ են պայմանագրեր կնքվում «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգով, քան կարելի էր ակնկալել նորմալ բաշխվածության պարագայում: Ցուցանիշների նման տարամիտումն օրինաչափ չէ: ԲՊԱ և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների՝ նման ընթացակարգով մրցույթների հաղթող ճանաչվելու այսչափ տարածվածությունը վկայում է շահերի բախման ռիսկերի մասին:

Առկա են ընդհանուր օրինաչափությունից նաև այլ շեղումներ: Օրինակ՝ 3-րդ աղյուսակի տվյալներով 2016թ. ամփոփված և կայացած չափաբաժինների/գնումների ամբողջ ծավալի մոտ **42.8%-ն** է բաժին ընկնում «Գնանշման հարցում» ընթացակարգին: 2017թ. համապատասխան ցուցանիշը կազմում է **55.4%**: Այս ընթացակարգը ենթադրում է գնային առաջարկների մրցակցության և ծախսային արդյունավետության ավելի բարձր մակարդակ: Մինչդեռ ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ 2014-2017թթ. կնքված պայմանագրերի ընդամենը **1.8%-ն** է «Գնանշման հարցում» ընթացակարգով կնքվել:

Այսինքն՝ ԲՊԱ կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների հետ նկատելիորեն հազվադեպ են պայմանագրեր կնքվում «Գնանշման հարցում» ընթացակարգով, քան կարելի էր ակնկալել նորմալ բաշխվածության պարագայում:

ՇԱՀԵՐԻ ԱՌԵՐԵՎՈՒՅԹ ԲԱԽՄԱՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԸ

Դիտարկված 709 պայմանագրերից **99-ում (14%)** բացահայտվել է **շահերի առերևույթ բախման իրավիճակ** (միջազգայնորեն ընդունված սահմանումների իմաստով):

Նշված 99 պայմանագրերը պատկանում են մրցույթներում հաղթող ճանաչված **26** կազմակերպությունների:

Որպես շահերի բախման հաստատուն գործոն դիտարկվել է **ԲՊԱ-ի՝ գնման պատվիրատուի պաշտոնատար անձ լինելը:**

Այս կայուն գործոնի հետ կապի մեջ առանձնացվել են հետևյալ կատեգորիաները.

1. ԲՊԱ-ն մասնակցություն ունի կամ ունեցել է գնման մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունում (**9 կազմակերպություն, 44 պայմանագիր**).
2. ԲՊԱ-ի հետ փոխկապակցված անձինք (ամուսինը, ծնողը, զավակը, քույրը և եղբայրը) մասնակցություն ունեն կամ ունեցել են գնման մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունում (**14 կազմակերպություն, 52 պայմանագիր**).
3. ԲՊԱ-ն կամ նրա ամուսինը աշխատանքի վարձատրություն և/կամ դրան հավասարեցված այլ վճարումներ է ստացել գնման մրցույթի հաղթող ճանաչված կազմակերպությունից (**3 կազմակերպություն, 3 պայմանագիր**):

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. ԲՊԱ-ների և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների՝ գնումների մրցույթներում հաղթող ճանաչվելու դեպքերի մեծ մասը (66%) տեղ է գտել «Բանակցային ընթացակարգ առանց հայտարարության» ընթացակարգով իրականացված մրցույթներում: Համադրելով այս ցուցանիշը 2016-2017թթ. կայացած գնումներում այս ընթացակարգին բաժին ընկնող միջին ցուցանիշի հետ (12%)՝ բացահայտվել է էական տարամիտում, ինչն օրինաչափ չէ: Այն հանգամանքը, որ նշված կազմակերպությունները գնումների գործընթացում առավելապես հաղթում են ոչ բաց, ոչ մրցութային ընթացակարգով, վկայում է շահերի բախման ռիսկերի մասին:

2. ԲՊԱ-ների և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների՝ գնումների մրցույթներում հաղթող ճանաչվելու դեպքերի փոքր մասն է (1.8%) տեղ գտել «Գնանշման հարցում» ընթացակարգով մրցույթներում: Այս ընթացակարգը ենթադրում է գնային առաջարկների մրցակցության և ծախսային արդյունավետության ավելի բարձր մակարդակ: 2016-2017թթ. կայացած գնումների ամբողջ ծավալի շուրջ 49%-ն է բաժին ընկնում այդ ընթացակարգին: Հետևաբար՝ այս ընթացակարգով անցկացված մրցույթներում հաղթած կազմակերպությունների շարքում նշված կազմակերպությունների փոքր թիվը ևս կարող է դիտվել որպես մրցակցությունից խուսափելու ցուցիչ:

3. Ուսումնասիրված 709 պայմանագրերից 99-ում (14%) առկա է շահերի առերևույթ բախման իրավիճակ. ԲՊԱ-ների կամ նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունները հաղթող են ճանաչվել այն մարմինների գնումների մրցույթներում, որտեղ ԲՊԱ պաշտոն է զբաղեցնում:

4. Պայմանագրերում բացակայում են ԲՊԱ-ների ստորագրությունները⁵: «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների լույսի ներքո, դրանք չի կարելի որակել որպես շահերի փաստացի բախման իրավիճակներ: Սակայն չպետք է բացառել մրցույթների իրականացման և հաղթող մասնակիցների որոշման գործընթացում ԲՊԱ-ների շահագրգիռ միջամտության հնարավորությունը, որը կարող է դրսևորվել ինչպես հորիզոնական, գործընկերային հարաբերությունների, այնպես էլ՝ վերադասի լիազորությունների իրացման միջոցով:

5. Շահերի բախման իրավիճակների օրենսդրական կարգավորումները նեղ են և լիարժեք չեն արտացոլում իրականության մեջ առկա ռիսկերը: Մասնավորապես, եթե ԲՊԱ-ն ներգրավված չի եղել գնման մրցույթի կազմակերպման և անցկացման, հաղթող մասնակցի որոշման, նրա հետ պայմանագրի ստորագրման և այլ գործընթացներում, այդ իրավիճակները հնարավոր չէ նույնականացնել որպես շահերի բախում: Մինչդեռ, ԲՊԱ-ների և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների՝ գնումների մրցույթներում հաղթող ճանաչվելու դեպքերի ցուցանիշների ոչ օրինաչափ տարամիտումները վկայում են անձնական շահերից ելնելով որոշումների կայացման բարձր ռիսկայնության մասին: Պաշտոնյայի ֆորմալ ներգրավվածության բացակայությունը շահերի բախումը բացառելու բավարար հիմք չէ:

⁵ Մովորաբար, պայմանագիրը ստորագրվում է պատվիրատու կառույցի աշխատակազմի ղեկավարի կողմից, որոնք, որպես կանոն, ԲՊԱ չեն հանդիսանում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նկատի ունենալով այն հանգամանքը, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքով շահերի բախմանն առնչվող հատուկ կարգավորումներ են սահմանվել գնահատող հանձնաժողովի անդամի և քարտուղարի, ինչպես նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի համար, նման կարգավորմամբ տեսականորեն չի բացառվել վերոնշյալ անձանց կողմից իրենց գնահատման հայեցողության իրացումը ի շահ իրենց փոխկապակցված անձանց կամ կազմակերպությունների:

Միաժամանակ, նույն օրենքով գնահատող հանձնաժողովի ձևավորումն իրականացվում է պատվիրատուի ղեկավարի հրամանով, ինչը գործնականում հնարավոր է դարձնում նաև վերջինիս ազդեցությունը գնահատող հանձնաժողովի անդամների վրա: Այս առումով, օրենսդրորեն առկա չէ որևէ կառուցակարգ, որը կբացառի մարմնի գնումների գործընթացում գնահատման հայեցողության իրացումը հոգուտ պատվիրատու մարմնում քաղաքական ազդեցություն ունեցող պաշտոնատար անձանց կամ վերջիններիս հետ փոխկապակցված կազմակերպությունների: Բոլոր դեպքերում, նշված կազմակերպությունների հաղթող ճանաչվելու պարագայում ռիսկային է դառնում կնքված պայմանագրերի կատարման նկատմամբ վերահսկողությունը մարմնի կողմից:

Վերոգրյալի հիման վրա առաջարկվում է քննարկման առարկա դարձնել օրենսդրական դրույթի սահմանման հարցը, որով կսահմանափակվի ԲՊԱ-ի կամ նրա հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների մասնակցությունն այն պատվիրատու մարմնի գնման ընթացակարգին, որտեղ ԲՊԱ-ն հանրային պաշտոն է զբաղեցնում: ԲՊԱ-ի կամ նրա հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ առևտրային կազմակերպությունը կարող է մասնակցել միայն բաց և մրցակցային ընթացակարգերով անցկացվող գնումներին (բացառություն կարող է նախատեսվել այն դեպքերում, երբ գնման ենթակա ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայությամբ):

Համանման արգելք է սահմանված արտասահմանյան մի շարք պետությունների (ԱՀԿ անդամ) օրենսդրությամբ: Այսպես, *Հատվիայում* պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև նրանց մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին արգելվում է ստանալ գնումների պատվերներ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, պետական ֆինանսավորմամբ կառույցներից, օգտվել պետական վարկային աղբյուրներից կամ պետական մասնավորեցման հիմնադրամներից՝ բացառությամբ բաց մրցութային կարգով տրամադրման դեպքերի: Բաց մրցութով պայմանավորված բացառությունները չեն տարածվում գնումների հանձնաժողովի անդամ հանդիսացող պաշտոնատար անձանց

կամ այն դեպքերի վրա, երբ գնումների հանձնաժողովի անդամները աշխատում են պաշտոնատար անձի ենթակայությամբ: Մշտական հանրային գնումներ իրականացնող հանրային մարմինը կամ կազմակերպությունը, որը պայմանագրեր է շնորհում, չի կարող ապրանքներ և ծառայություններ պատվիրել պաշտոնյային կամ նրա հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև նրանց առնչվող այնպիսի կառույցների, որտեղ հանրային մարմնի կամ կազմակերպության պաշտոնյան և նրա հետ փոխկապակցված անձինք զբաղեցնում են ղեկավարի, կառավարման մարմնի կամ իրավական ներկայացուցչի պաշտոն կամ տվյալ կառույցում ունեն 5 տոկոսից ավելի մասնակցություն (ուղղակի/անուղղակի մասնակցությամբ կամ այլ իրավաբանական անձի միջոցով):

Ընդ որում, պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված կազմակերպությունների՝ գնումների մասնակցելու պարագայում անհրաժեշտ է ապահովել թափանցիկության լրացուցիչ պայմաններ, ինչպես օրինակ, նմանատիպ իրավիճակների մասին հատուկ հանրային իրազեկումը, գնահատող հանձնաժողովի ձևավորման և գործունեության առավելագույն թափանցիկության ապահովումը, հանձնաժողովի անդամների անկախությունն ապահովող լրացուցիչ իրավական երաշխիքների սահմանում:

2. Ապահովել իրական սեփականատերերի և հայտ ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ էլեկտրոնային տվյալների բազայի ստեղծումը, որը պետք է գործարկվի հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց մասնակցությամբ կազմակերպությունների բազայի հետ: Տվյալների համադրման արդյունքներով անհրաժեշտ է նույնականացնել հայտ ներկայացրած պաշտոնատար անձանց փոխկապակցված կազմակերպությունները, և համապատասխան տվյալները հրապարակայնացնել՝ ըստ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների: Այս միջոցառումը կապահովի հատուկ հանրային իրազեկում այն բոլոր դեպքերում, երբ հայտում նշված կազմակերպության տվյալները կնույնականացնեն կազմակերպությանը՝ որպես պաշտոնատար անձի հետ փոխկապակցված: Միաժամանակ, հայտ ներկայացրած կազմակերպությունների վերաբերյալ տվյալների էլեկտրոնային բազայի ստեղծումը հնարավորություն կտա այն փոխգործարկել «սև ցուցակ»-ում ներառված կազմակերպությունների վերաբերյալ էլեկտրոնային տվյալների հետ, ինչն արագ կբացահայտի բոլոր այն դեպքերը, երբ հայտ է ներկայացնում «սև ցուցակ»-ում նշված կազմակերպությունը:
3. Ներդնել շահերի բախման իրավիճակում պաշտոնատար անձանց հետ փոխկապակցված կազմակերպությունների հետ կնքված գնումների պայմանագրերի անվավերության հետևանքները կանոնակարգող գործուն իրավական կառուցակարգեր: Հարկ է նկատի ունենալ, որ «Վարչարարության հիմքունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի՝ «անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է շահերի բախման իրավիճակում (հոդ. 63, մաս 1, կետ «գ»)» դրույթի գործնական իրացումն ապահովող օրենսդրական կարգավորումներն ամբողջական չեն:

4. Բարձրացնել գնումների գործընթացի թափանցիկությունն այն առումով, որ ապահովվի բոլոր փաստաթղթերի (բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների) ամբողջական թվայնացումն ու հասանելիությունը՝ որոնման դյուրին և մատչելի համակարգի միջոցով: Այս առումով, կատարելագործել որոնողական համակարգերը (հատկապես armeps համակարգը)՝ ապահովելով տվյալների ճշգրիտ մուտքագրումը, կազմակերպությունների նույնականացումն անգամ հնարավոր տեխնիկական վրիպակների դեպքում:

5. Շահերի բախման իրավիճակներում որոշումների կայացման, գործողությունների կատարման դեպքերի նվազեցմանը նպաստող հանրային վերահսկողության գործիքակազմը համալրելու նպատակով հզորացնել տեղեկատվության թափանցիկությունը, մատչելիությունը և արժանահավատությունն ապահովող ենթակառուցվածքները: Մասնավորապես,

Ա. Սեղմ ժամկետներում ավարտին հասցնել ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության արխիվային տվյալների թվայնացումը, ինչը հնարավորություն կտա պարզել պաշտոնատար անձանց ազգակցական կապերը:

Բ. Ապահովել իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրի էլեկտրոնային համակարգում առկա անճշտությունների վերացումը, ներբեռնվող փաստաթղթերի և տվյալների լրիվությունը: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ արտասահմանյան մի շարք երկրներում իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալները բաց են և հասանելի հանրությանը՝ առանց վճարներ գանձելու, առաջարկում ենք քննարկել ռեգիստրի տվյալների հանրայնացման և այդ առնչությամբ վճարների գանձմանն առնչվող կարգավորումների վերանայման հարցը:

6. «Գնումների մասին» օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի բ ենթակետով, 33-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով, ինչպես նաև 49-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դրույթների արդյունավետ կիրարկումն ապահովելու նպատակով ներդնել շահերի բացահայտման, ինչպես նաև հայտարարված տվյալների արժանահավատության ստուգման գործուն կառուցակարգեր՝ պարբերաբար հրապարակելով համապատասխան տեղեկատվություն: